

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«ՀԻՄՆԱԴՐԱՄԵՆՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-444-10.01.2020-SՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԻՄՆԱԴՐԱՄԵՆՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Վերնագիր	Առաջարկում ենք Նախագծի վերնագրում նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխության արդյունքում անհրաժեշտություն է առաջանում «Հիմնադրամների մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության մեջ «սահմանված ժամկետում» բառերից հետո լրացնել «սույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված» բառերը: Սույն առաջարկը բխում է այն հանգամանքից, որ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխության արդյունքում հաջորդ նախադասությունն անորոշ կարգավորում է պարունակում, մասնավորապես հասկանալի չէ՝ ինչ հաշվետվության համար է պատասխանատվություն նախատեսվում: Հարկ է նկատել, որ օրինակ «Հիմնադրամների մասին» օրենքինախորդող՝ 37-րդ հոդվածը նշում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների մասին, մինչդեռ հիմնադրամի գործունեության հրապարակայնությունն ապահովելու	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նպատակով հրապարակվող հիմնադրամի գործունեության մասին հաշվետվությանը վերաբերում է «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածը:		
3.	ՀՀ կառավարություն	Օրենքի 38-րդ և 39-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 38-րդ և 39-րդ հոդվածներում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեի» բառերով»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԱԳՐՔԻՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱխագծի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169 ¹⁸ -րդ հոդված	«Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացվել է նոր «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով: Առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169 ¹⁸ -րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 169. 18. Հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելը կամ թերի հրապարակելը Հիմնադրամների կողմից հաշվետվությունը թերի հրապարակելը կամ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելը՝ առաջացնում է նախագուշացում հիմնադրամների պաշտոնատար անձանց նկատմամբ: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված նախագուշացման նշանակման մասին որոշմանը իրազեկվելու	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			<p>օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, հիմնադրամի կողմից սույն հոդվածով նախատեսված խախտումը (խախտումները) չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում հիմնադրամների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:</p> <p>Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված տուգանքի նշանակման մասին որոշմանը իրազեկվելու օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, հիմնադրամի կողմից սույն հոդվածով նախատեսված խախտումը (խախտումները) չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում հիմնադրամների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:</p>		
--	--	--	--	--	--